ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 նոյեմբերի 2025 թվականի N 1512

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«ԿՄՀՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/58» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում նվազագույն գին էր առաջարկել ԱՁ Հրանտ Սեդոյանը և գնահատող հանձնաժողովի կողմից ԱՁ Հրանտ Սեդոյանի ներկայացված հայտում արձանագրվել էր անհամապատասխանություն հրավերի պահանջներին, մասնավորապես՝ դիմում հայտարարությունը (Հավելված 1) հաստատված չէր էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Ուստի առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշման N 1 հավելվածի 41-րդ կետով և «ԿՄՀՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/58» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.11 կետով՝ մասնակցին առաջարկվել էր ծանուցման պահից 1 աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը: Սահմանված ժամկետում մասնակցի կողմից շտկում չկատարելու հիքով հայտը գնահատվել էր անբավարար և մերժվել:

Սույն ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրությունները հրապարակված են gnumner.am և միարժամանակ կցված են eauction.armeps.am հարթակներում:

Հիմք ընդունելով վերեգրյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ) ենթակետով և Կառավարության 2017թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 19-րդ ենթակետով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. ԱՁ Հրանտ Սեդոյանին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում.

Գնման ընթացակարգի				Մասնակցի				Պատվիրատուի անվանումը	Իրավական հիմք	Այլ անհրաժեշտ տեղեկատվություն
ծածկագիրը	չափաբաժնի			Անվանումը	ՀՎՀՀ	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու հանգամանքների առաջացման ամսաթիվը			
	համարը	անվանումը	գնման գինը /ՀՀ դրամ/							
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
«ԿՄՀՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/58»	1	Ծառերի (Եղևնիների)	9.450.000	ԱՁ Հրանտ Սեդոյան	40500139	ՀՀ, ք. Ծաղկաձոր, խ. Կեչառեցու 7/1	12.11.2025	Հրազդանի Համայնքապետարան	«ԿՄՀՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/58» ծածկագրով հրավերի 8.11 կետ և ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 41-րդ կետ	Առկա չէ

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԵՎԱԿ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

24 նոյեմբերի 2025թ.
ք.Հրազդան